Արձանագրություն N 4
Протокол N 4

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի
Внеочередное заседание оценочной комиссии под кодом «EQ-BMAPDzB-21/6»

ք. Երևան
г. Ереван

08.01.2021թ.
Ժամը 11:00
08.01.2021г.
11:00ч.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սարգսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Գալստյանը, Հ. Սարգսյանը, Հ. Մելքումյանը,
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը
Բացակայում էր Է. Թարփոշյանը
Участвовали
Председатель комиссии Г. Саргсян
Члены комисии: Э. Галстян, А. Саргсян, А. Мелкумян
Секретарь комисии: Г. Мурадян
Отсутствует Э. Тарпошян

1. **«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 30.12.2020 և 04.01.2021 թվականին ներկայացված հարցումներին պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ**
Ответы на разъяснения по запросу поданного 30.12.2020 и 04.01.2021 в рамках закупочной процедуры под кодом «EQ-BMAPDzB-21/6»

(Հ. Սարգսյան
Г. Саргсян)

Պարզաբանման պահանջի տեքստ 1
Текст запроса для разъяснения 1

Հարգելի Գործընկեր
խնդրում եմ պարզաբանել
տեխնիկական բնութագրում նշված
Ա)
• փոխանցման տուփը՝ Ամբողջությամբ ավտոմատ, Allsion կամ ZF կամ համարժեք, ինտեգրված ռետարդեր
կդիտարկվի նաև որ եթե նեկայացվի մեխանիկական փոխանցումատուփ ?

Բ)
• շարժիչը՝ սեղմված բնական գազով (մեթանով)աշխատող, առնվազն Եվրո 5 եկելոգիական նորմին համապատասխանող, հզորությունը ոչ պակաս՝ 200 ձ.ուժ (147 կՎտ)՝ ավտոբուսի ետնամասում տեղակայված, վառելիքի բաքերը նվազագույնտ CNG type 2, տանիքի վրա տեղաբաշխմամբ, տարողությունը՝ առնվազն 600 լիտր, հովացման համակարգը՝ հեղուկի միջոցով հովացմամբ, մեկ ամբողջական լիցքավորմամբ ավտոբուսը պետք է շահագործվի առնվազն 320կմ.

շարժիչը ЯМЗ 53414 գազ CNG եվրո 5, հզորությունը 170л.с. (125кВт), տեղադրված առաջնամասում ,վառելիքի բաքերի ծավալը 896լ. (8 հատ բաք 62լ. թափքի հիմքում տեղադրված դաս 1, 4 հատ բաք 100 լ. տանիքի վրա դաս 3). մեկ ամբողջական լիցքավորմամբ ավտոբուսը շահագործվում է 550-600 կմ.

Գ)

• կառուցվածքային և տեխնիկական այլ չափորոշիչներ՝ ցածր մուտքի հարմարադասում, եզրաչափային չափերը՝ երկարությունը 8500մմ±200մմ. , լայնությունը՝ հետին դիտարկման հայելիների բացվածքով՝ ոչ ավելի 2600 մմ-ից, ավտոբուսի բարձրությունը՝ առավելագույնը 3500, ուղևորասրահի բարձրությունը՝ ոչ պակաս 1950 մմ-ից, ավտոբուսի լցավորված և նախատեսված պարագաներով կահավորված զանգվածը ոչ ավելի 9200 կգ-ից, թույլատրելի առավելագույն զանգվածը (առավելագույն բեռնվածությունը)՝14000 կգ-ից,

ցածր մուտքի հարմարադասում ավտոբուսի ետնամասում ամբողջությամբ նախատեսված սայլակով մարդկանց մուտքի ելքի համար ,երկ 8800 սմ, թույլատրելի առավելագույն զանգվածը 12500 կգ.

Կանխավ շնորհակալ եմ

Պարզաբանում տրամադրելու տեքստ.1
Текст разъяснения 1

Հարգելի Գործընկեր,
Ի պատասխան Ձեր կողմից բարձրացված հարցադրումների՝ հայտնում եմ, որ ավտոբուսների ձեռք բերման համար հայտարարված մրցույթի տեխնիկական բնութագրի մշակման ժամանակ հիմք են ընդունվել հետևյալ չափորոշիչները՝

1. WYG ընկերության կողմից մշակված նոր երթուղային ցանցը՝ նախատեսված շարժակամով և շահագործման պայմաններով: Նախատեսված շարժակազմի չափսերը և այլ չափորոշիչներ հիմնված են Երևան քաղաքի ուղևորահոսքի բաշվածության ցուցանիշների և նախագծված երթուղիների հիման վրա:
2. Երևան քաղաքի ռելեֆը, որը հիմք է հանդիսացել սահմանել նվազագույնը 200 ձ.ուժ շարժիչ, քանի որ դրանից պակաս հզորության դեպքում սահմանված քաշի և երկարության ավտոբուսը շահագործման ընթացքում կունենա տեխիկական խնդիրներ:
3. Ուսումնասիրելով ներկայումս շահագործվող ավտոբուսների սպասարկման և վերանորոգման ցուցանիշները՝ որոշում է կայացվել նոր գնվող ավտոբուսների համար սահմանել ավտոմատ փոխանցված տուփ ինտեգրված ռետարդերով, որը էականորեն կնվազեցի հետագա շահագործման ընթացքում ներկայումս առաջ եկող խնդիրները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ տեխնիկական բնութագրում Ձեր կողմից նշված հարցադրումները հնարավոր չէ փոփոխել:

Պարզաբանման պահանջի տեքստ 2
Текст запроса для разъяснения 2

Dear Sirs,
1. Usually, the local electronic tenders in Georgia are indicating the budget of the Project. Here I cannot find the budget. Can you please publish the budget? Or where can I find the Procurement Plan of the Yerevan municipality? I think this is public information and should be open to all stakeholders.
Regards, Levan

Հարգելի պարոնայք,
1. Սովորաբար Վրաստանում տեղական էլեկտրոնային տենդերները նշում են theրագրի բյուջեն: Այստեղ ես չեմ կարող գտնել բյուջեն: Խնդրում եմ, կարող եք հրապարակել բյուջեն: Կամ որտե՞ղ կարող եմ գտնել Երևանի քաղաքապետարանի գնումների ծրագիրը: Կարծում եմ, որ սա հանրային տեղեկատվություն է և պետք է բաց լինի բոլոր շահագրգիռ կողմերի համար:
Հարգանքներով, Լևան

Պարզաբանում տրամադրելու տեքստ.2
Текст разъяснения 2

Հարգելի գործընկեր
ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի (այսուհետ՝ Կարգ) 17-րդ կետի համաձայն՝ «Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ

Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է»:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Միաժամանակ՝ գնման ընթացակարգը «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի կիրառմամբ կազմակերպելու դեպքում, անկախ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների, Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ բոլոր մասնակիցների հետ վարվում են գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ 0:
Принято решение: за - 4, против - 0.

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.
Имена и фамилии членов комиссии, присутствующих на заседании.

Հանձնաժողովի Комиссии		
Նախագահ՝ Председатель		Հ. Սարգսյան Г. Саргсян
Անդամներ՝ Члены		Է. Գալստյան Э. Галстян
		Հ. Սարգսյան А. Саргсян
		Հ. Մելքումյան А. Мелкумян
Քարտուղար՝ Секретарь		Գ. Մուրադյան Г. Мурадян